ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեմա** ՝ Գրականագիտական տարրական գիտելիքների դերը ընթերցողական կարողությունների ձեվավորման գործընթացում

**Հետազոտող ուսուցիչներ** ՝ Ղուկասյան Ժենյա
Մանուկյան Էլմիրա
Սարգսյան Նարինե
Կոտայքի մարզ Քանաքեռավանի միջն. դպրոց

**ԵՐԵՎԱՆ 2022**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1. Գրականագիտական գիտելիքների տեղն ու դերը կրտսեր դպրոցում…….5

1.1 Գրական-տեսական գիտելիքների համակարգի սահմանները կրտսեր դպրոցում 5

1.2 Գեղարվեստական ստեղծագործությունների շուրջ տարվող աշխատանքի հիմնա-կան խնդիրները կրտսեր դպրոցում……8

1□3 Գրական ստեղծագործության բաղադրամասերը և դրանք ուսումնասիրումը կրտսեր դպրոցում……15

Գլուխ 2. Գրականագիտական գիտելիքների դերը կարդացած հասկանալու գորընթացում……31

2.1 Գրական-տեսական գիտելիքների ուսումնասիրման եղամակները……31

2.2 Գրական ստեղծագործության վերլուծությունը ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորման միջոց……47

2.3 Ընթերցած ստեղծագործության հասկացմանը նպատակաուղղված ձև՝ վերարտադրում…… 58

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողական կարողությունների ձևավորումն այսօր դիտվում է որպես մայրենի լեզվի գաղտնիքների յուրացման, կարդալու կարողության և հմտության ձևավորման, ընթերցածը հասկանալու կարևոր հիմնախնդիր: Ողջ հասարակությունն այսօր մտահոգված է ընթերցանության նկատմամբ մատաղ սերնդի հետաքրքության և կարդալու ցանկության բացակայությամբ:Իրոք, այդ երևույթը մտահոգիչ է, որովհետև մարդու ընդհանուր զարգացման, մասնագիտական որակների ձեռքբերման գործում կարևոր դեր ունի ընթերցելու կարողությունը:

Հակառակ այս ամենի՝ կրտսեր դպրոցում գրականագիտական գիտելիքներին գրեթե տեղ չի տրվում:Մեր աշխատանքի ընթացքում հասկացել ենք, որ հենց վերոնշյալն է պատճառը, որ աշակերտները հետագա ուսումնական տարիներին չեն կարողանում հասկանալ կարդացածը, ըմբռնել նրա հիմնական բովանդակությունը:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է կրտսեր դպրոցի մայրենիի ծրագրում և դասգրքերում գրականագիտական գիտելիքների անտեսմամբ՝ հակառակ նրա, որ դրանք կարևոր դեր ունեն ոչ միայն կարդացածը հասկանալու.այլև սովորողների ընդհանուր մտավոր զարգացման իմաստով:

Մեր կարծիքով, եթե սկսած առաջին դասարանից փուլ առ փուլ երեխաները ձեռք բերեն պարզ գրականագիտական տեղեկություններ, ապա հետագայում նրանք կդառնան հասկացող ընթերցողներ:

Մեր նպատակն է եղել.

- ուսումնասիրել գրականգիտական գիտելիքների տեղն ու դերը կարդացած ստեղծագործություններն ըստ ամենայնի ընկալման գործում,
- բացահայտել մայրենիի դասագրքերի ընձեռած հնարավորությունները նշված հիմնախնդրի տեսանկյունից,
- մշակել մեթոդական ցուցումներ գրականագիտական տարրական գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ:

Ուսումնասիրության խնդիր է՝ բացահայտել գրականագիտական գիտելիքների ուսուցման գործընթացի առանձնահատկությունները՝ հիմք

ընդունելով կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների զարգացման նպատակադրումը:

Նշված խնդիրներով պայմանվորված՝ մենք ընտրել ենք հետազոտության մեթոդներ,մասավորապես իրականացրել ենք գրականության ուսումնասիրություն,

դասալսումներ հարցազրույցներ աշակերտների և ուսուցիչների հետ:

Վերոնշյալ խնդիրը լուծելու հետևյալ դրույթներնն ենք առաջադրում.

1) Կրտսեր դպրոցականներն ի վիճակի են յուրացնելու գրականագիտական տարրական գիտելիքները, եթե դրանք ուսուցանվեն մանկավարժամեթոդական տեսակետով ճիշտ մեթոդական հնարներով:
2) Կրտսեր դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունները, հեքիաթները և առակները լայն հնարավորություն ունեն գրականագիատկան տարրական գիտելիքների ուսումանսիրամն առումով:

# ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

## 1.1. Գրական տեսական գիտելիքների համակարգի սահմանները Կրտսեր դպրոցում

Կրտսեր դպրոցում գրական տեսական գիտելիքների ուսումնասիրությունը միշտ կարևորվել է: Սակայն դրա հետ մեկտեղ հաճախ բանավեճեր են տեղի ունեցել այն հարցի շուրջ, թե ինչպիսին պետք է լինի գրական գիտելիքների այն համակարգը, որի ուսումնասիրությունը պիտի կատարեն կրտսեր դպրոցա-կանները:

Կրտսեր դպրոցի մայրենի լեզվի դասընթացի ծրագրում նախատեսված է գրական գիտելիքների մի այնպիսի համակարգ, որը հենվում է մի կողմից II-IV դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական և այլ ժանրի ստեղծագործությունների ինքնատիպության,մյուս կողմից՝ սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվառման վրա: Դրան համապատասխան՝ այդ դասընթացում գրական գիտելիքները որոշակի համամասնությամբ ու աստիճանականությամբ պիտի բաշխվեն նախ ուսուցման տարբեր աստիճանների միջև, ապա՝ յուրաքանչյուր աստիճանի ներսում: Օրինակ 2-3-րդ դասարաններում աշակերտներն ուսումնասիրում են հեքիաթներ, առածներ, ասացվածքներ,հանելուկներ,առակներ և միաժամանակ ձեռք են բերում դրանք միմյանցից տարբերելու ունակություն:Նրանք հասկանում են նաև հեքիաթներ, առածի ու առակի այնպիսի բնորոշ առանձնահատկությունը,ինչպիսին է այլաբանությունը:

Դրա հիման վրա 4-րդ դասրանում աշակերտները պարզագույն տեղեկություններ են ձեռք բերում հեքիաթի, առածի, ասացվածքի, հանելուկի, առակի, այլաբանության ու չափազանցության մասին:

<u>Հեքիաթը Ժողովրդական</u> բանահյուսության ամենատարածված տեսակներից մեկն է:Այն բովանդակությամբ շատ հետաքրքրաշարժ է, կառուցվածքով՝ պարզ ու դյուրընկալ:

Դրա շնորհիվ աշակերտները շատ են սիրում ու հաճույքով սովորում հեքիաթը:Այնուամենայնիվ, 4-րդ դասարանում հեքիաթի վերաբերյալ տրվում է պարզագույն հասկացողություն: Իսկ նրա տարատեսակների՝ <u>հրաշապատում</u> և

իրապատում հեքիաթների մասին գաղափար է տրվում հաջորդ դասարաններում: Այնինչ, հենց այս դասարանների աշակերտներն են առավելապես սիրում հեքիաթներ, հավատով և հետաքրքրությամբ ընդունում դրանց հերոսներին, կապվում նրանց հետ, դառնում նրանց բարեկամները կամ հակառակորդները:

Առածը, ասացվածքն ու հանելուկը նույնպես ժողովրդական բանահյուսության ամենատարածված և միաժամանակ ամենահետաքրքրական տեսակներից են:Աշակերտները 1-4 րդ դասարանում դրանք ևս սովորում են սիրով ու հաճույքով:

Առակը, թեև ծագել է ժողովրդական բանահյուսությունից, բայց հիմնականում մշակվում է գրողների կողմից ու դառանում գեղարվեստական գրականության տեսակներից մեկը: Այն փոքր-ինչ ավելի դժվար հասկանալի է,քան հեքիաթը,առածը, ասացվածքն ու հանելուկը: Այդ պատճառովել էլ՝ առակի մասին գաղափար է տրվում դրանց ուսումանսիրությունից հետո:

Թե՛ հեքիաթի, թե՛ առածի և թե՛ առակի բնորոշ առանձնահատկություններից է այլաբանությունը: Հեքիաթի մասին հասկացություն տալուց և մի քանի հեքիաթներ անցնելուց հետո բացատրվում է այլաբանությունը:

2-4-րդ դասարաններում աշակերտները սովորում են արձակ և չափածո ստեղծագործությունների բազմաթիվ նմուշներ և դրանք առանց դժվարության զանազանում իրարից:

Մինչև 4 -րդ դասարան աշակերտները ոչ միայն սովորում են այլաբանությունն ու չափազանցությունը, այլև գործնականում ծանոթանում գեղարվեստական խոսքի պատկերավորման մյուս միջոցներին:Եվ դա հիմք է տալիս կրտսեր դպրոցում տեղեկություններ ձեռք բերել նաև փոխաբերության,համեմատության ու մակդիրի վերաբերյալ:

Ամեն մի երկ՝ մեծ թե փոքր, ունի նաև իր կոմպոզիցիան՝ կառուցվածքը կամ հորիվածքը, որի մեջ միավորվում, հաջորդաբար դասվորվում ու փոխադարձորեն կապակցվում են նրա բոլոր բաղադրամասերը: Հենց այս կառուցվածքի նրբությունների իմացությունն էլ օգնում է կրտսեր դպրոցականների գործնականորեն տարբերել այդ ստեղծագործությունները միմյանցից և պարզ, մատչելի մեկնաբանություններով ներկայացնել դրանց բնութագրական

կողմերը:Ահա այն գրական գիտելիքների համակարգը, որն ուսումնասիրվում է տարրական դասարաններում:Այդ համակարգը բնորոշ է նրանով, որ գրական գիտելիքները տրվում են ոչ թե միանգամից,այլ աստիճանաբար ՝ միշտ հինը կրկնելով և նորն աստիճանաբար ավելացնելով և ընդլայնելով:

**1□2□Գեղարվեստական ստեղծագործությունների շուրջ տարվող աշխատանքի հիմանական խնդիրները կրտսեր դպրոցում**

‹‹Կարճ,բայց հասկանալի, դրա համար էլ հիասքանչ››

Կամ ‹‹խոսենք նյութում գլխավորը հասկանլու մասին››

Նյութը հասկանալով կարդալու կարողության ձևավորման ընթացքում կարևորը և միաժամանակ ամենադժվարը ՝ բնագրում գլխավոր միտքն առանձնացնելն է:

Եթե ստեղծագործության կենտրոնական գաղափարի, նրա իմաստի էության և գլխավորի մասին պատկերացման միջև (որը ձևավորվում է ընթերցողի գիտակցության մեջ) միանշանակ համապատասխանություն կա, ապա բնագիրը հասկանալի է ընթերցողին:

Գեղարվեստական նյութը հասկանալով կարդալով ՝ մենք կարողանում ենք տեսնել նրա խորքերը:Եվ վերջապես,շատ կարևոր է նշել, որ հասկանալը, ինչքան էլ որ բազմանշանակ լինի, մնում է բնագրի սահմանում:

Ընթերցողը, ինչպես ասել է Բիտովը,նման է երաժշտին, որը նվագում է նոտաներով:Կարելի է տարբեր կերպ դասավորել շեշտադրությունը, բայց, ինչպես ասում է ժողովրդական իմաստությունը,‹‹<u>երգից բառերը դեն չես նետի</u>››, այսինքն ՝ բնագիրն է ուղղորդում հասկանալուն և տանում է ընթերցողին դեպի գլխավորը ՝ իր ‹‹իմաստի էությանը››:

Մենք 4-րդ դասարանում քննարկեցինք Ի.Դիկիի Կարմիր խնձորներ պատմվածքը:

Աշակերտները պետք է կարդային պատմությունը,բացատրեին վերնագրի իմաստը, իսկ հետո հեղինակի միտքը արտահայտեին իրենց բառերով:

Հայտնի է, որ նյութի հասկանալու աստիչանը գնահատվում է նրա ենթատեքստը որոշելու կարողությամբ, վերնագրի իմաստը հասկանալով:

Պատմվածքը երկու ընկերոջ մասին է, որոնք պատուհանից հետևում են, թե ինչպես են մարդիկ սառցապատ գետնի վրա սահում, և խաղ հորինեցին ՝ «Կընկնի-չի ընկնի» վերնագրով: Ուրախ խաղը շարունակվում էր այնքան ժամանակ մինչև որ սառույցի վրա սայթաքեց ընկերոջ մայրիկը ՝ ձյան վրա շաղ տալով կարմիր խնձորները:Ավարտելով խաղը ՝ տղան վիրավորված գնաց ոչինչ չհասկացող ընկերոջ մոտից, իսկ տանը դիմավորելով աշխատանքից տուն եկող մայրիկին ՝ չհասկացող ընկերոջ մոտից,իսկ տանը դիմավորելով աշխատանքից տուն եկող մայրիկին ՝ առաջին անգամ նրա նկատմամբ հոգատար եղավ:Ըստ մեթոդիստների՝ այս պատմվածքի հիմնական միտքը քրիստոնեական բարոյական պատվիրաներից մեկն է. «Ուրիշին սիրիր քո՛ անձի պես»:

Նյութի գաղափարարը ՝ միտքը, նաև այն է, որ հաճախ մարդ մտածում է իր արարքների բարոյականության մասին, երբ նրա կամ նրա հարազատի հետ դեպք է պատահում (հարազատ մարդուն գնահատելու անհրաժեշտության, անտարբերության, կարեկցանքի մասին): Պատմվածքի ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունն այն է, որ վեր նշված մտքերը բխում են միայն նրա բովանդակությունը վերլուծելուց հետո:Հիմնական միտքը հասկանալու համար

պահանջում է բովանդակության մեջ ներկայացված մտքերի ընդհանրացում, խորքային վերլուծություն:

Ստեղծագործության վերնագիրը մենք վերլուծեցինք տարբեր տեսակետներից: Մի կողմից կարմիր խնձորների հետ կապվում է նյութի գագաթնակետը, որից հետո տեղի է ունենում բեկում հերոսներից մեկի գիտակցության և գործողությունների մեջ: Մյուս կողմից ՝ անվանումը պարզորոշ կերպով խորհրդանշական է. ձյան վրա շաղ տված կարմիր խնձորները կարծես վտանգի, անհանգստություն ազդանշան են, մտքի լուսավորման, ամոթի նշան:

Այս աշխատանքի վերլուծությունը ցույց տվեց, որ աշակերտների մեծամասնությունը,որպես նյութի գաղափարական մաս, առանձնացնում են առաձին մտքեր, որոնք «կարդալով իմանում են» տեքստից (50%):

Որպեսզի ասվածը ակնառու լինի, ներկայացնենք այս փաստը գծապատկերի միջոցով:Ներկայացված են երկու 4-րդ դասարանների 47 երեխայի արդյունքերը.




1. Կարողանում են առանձնացել գաղափարը (50%),
2. Ստեղծագործություն հիմնական միտքը ձևակերպում են (12,5%),
3. Համառոտ պատմում էին՝ արտահայտելով հիմնական բովանդակությունը (35,8%):
4. Վերնագիրը կապեցին ընդհանուր իմաստի հետ և մեկնաբանեցին(28,4%):

Նյութի գլխավոր մտքի բացահայտման համար գլխուղեղը պետք է ավելորդ ջանքեր գործադրի, այսինքն՝ իրականացնի կրկնակի աշխատանք:Այս

գործընթացը պահանջում է ժամանակ, մտավոր և հոգեկան գործունեության հատուկ պայմաններ:Դասի ընթացքում իմաստի համադրումը կազմակեպում և ուղղորդում է ուսուցիչ («գլխավոր մտքի առանձնացում») առաջարկել երեխաներին հուշող հարցեր կամ վարժություններ:Այդ ճանապարհը երեխաներն անցնում են քննարկման միջոցով:Որպես կանոն ՝ նման աշխատանքի ընթացքում մասնակցում է դասարանի փոքրամասնությունը:

Դրանում կարելի է համոզվել ՝ հարցնելով բնագրի գլխավոր մտքի մասին միայն նյութը մանրամասն պարբերությունների բաժանելուց հետո:Դասարանում այդ հարցին պատասխանեց 5-6 աշակերտ : Մնացածներն ընդհանուր նյութը ստացան պատրաստի ՝ «բացահայտված» տեսքով: Հաճախ կանգնում ենք այնպիսի իրավիճակի առջև,երբ աշակերտը միայն «աչքերով» է կարդում, ոչ թե «խելքով» և «սրտով»:Ի դեպ՝ այդ հարցում տխուր դերակատարություն ունեցավ կարդալու բարձր տեխնիկային հետամուտ լինելը ՝ հաճախ առանց նյութի իմաստը հասկանալո:Արագ կարդալու դեպքումաշակերտը չի մտածում իր կարդացածի շուրջ, դրա համար էլ նյութն ամբողջությամբ չի հասկանում: Երբ աշակերտների առջև մենք խնդիր դրեցինք կարդացածի գլխավոր միտքն առանձնացնել, նրանք սկսեցին պատմել նյութը ՝ աշխատելով «նյութը թարգմանել իր լեզվով»:Այստեղից պարզ է դառնում, որ ստեղծագործության մեջ առկա մտքերի յուրացման,արտահայտման և հասկանալուն ուղղված նման միջոցները պետք է հատուկ սովորեցնել: Աստիճանաբար կարդացած ստեղծագործության մեջ ուղղակիորեն արտահայտված գլխավոր մտքից կարելի է անցում կատարել հիմնական մտքին, ապա ընդհանրացնելով կարդացածը՝ բացահայտել այն և արտահայտել ինքնուրույն մտքերով:Կարդացած ստեղծագործության գլխավոր մտքի առանձնացումը հասկանալուն ուղղված ամբողջ աշխատանքի արդյունքն իր մեջ ներառում է բառերին ուշադրություն դարձնելը,նյութի շուրջ երկխոսությունը և դեպքերի ընթացքը հիշողության մեջ ակտիվացնելը:

Գլխավոր մտքի հասկանալն արտահայտվում է խոսքային պլանով և վերարտադրությամբ:Առաջին չափանիշից մենք օգտվում ենք ՝ երեխաներին տալով ավանդական հարցեր.

- Ո՞րն է ստեղծագործության գլխավոր իմաստը:

- Ի՞նչ էր ուզում ասել հեղինակն իր ընթերցողներին:

Երկրորդ չափանիշը մենք օգտագործեցինք 3-րդ դասարանում՝ առաջարկելով աշակերտների կարդացած ստեղծագործությունը համեմատել ուրիշների հետ (օր.՝ասացվածքների) և ընտրել այդ միտքն այլ ստեղծագործության մեջ կամ հորինել պատմություն,որում նմանատիպ գաղափար է ներկայացվում: Որպեսզի աշակերտը սովորի առանձնացնել կարդացածի գլխավոր միտքը, նա պետք է գիտակցի, որ նյութի հետ յուրաքանչյուր փոխգործունեության ընթացքում նրա առջև դրված է այդ նպատակը:Գլխավոր միտքը հասկանալուն նպաստող կարևոր պահը յուրաքանչյուր բառի, բառակապակցության, նախադասության և ավելի մեծ իմաստային կառույցին միտքն «ընդգծել է, առանձնացնելը»:

Ստեղծագործության շուրջ մտածելով՝ ընթերցողը փորձում է գրական լեզվից անցնել իր «սեփական» ինքնուրույն խոսքին:Որպեսզի օգնենք աշակերտներին այդ հասկացությունը կերպարների լեզվից տեղափոխել մտքերի լեզու, մենք կիրառում էինք մի քանի եղանակ:Դրանցից մեկը բնագրի շուրջ կազմված «հեռագրերն են»:Դրանց իմաստը՝ որպես տեղեկատվական միջոց, գլխավոր մտքի առանձնացումը և հակիրճ ձևակերպումն է:Հեռագրում «թանկ է» յուրաքանչյուր բառ:Նյութից հեռագիր կազմել՝ նշանակում է մի նախադասության մեջ հստակ և հակիրճ ձևակերպել նյութի գլխավոր միտքը:Այն կարող է լինել փաստացի տեղեկության հակիրճ ձևակերպում կամ թեմայի հիմնական գաղափարը:Այս վարժությունը կատարելիս հսկայական աշխատանք տարանք բառերի շուրջ,այսինքն՝ միտքն արտահայտելու համար հավաքագրեցինք բանալի բառերը՝ անտեսելով էական իմաստ չունեցող բառերը:Այս եղնակը նպատակահարմար է օգտագործել ճանաչողական կամ գեղարվեստական նյութերի հետ աշխատանքի ընթացքում, որոնցում ընդհանուր պատկերացումները բավականին պարզ են:

Մեկ այլ վարժություն:Ստեղծագորության բովանդակությանն առաջադրել «լավ հարց», որի պատասխանից կձևավորվի նրա հիմնական միտքը:Միաժամանակ կարևոր է, որ այդպիսի հարցեր տան աշակերտները:Անվանի հոգեբան Վիգոտսկին ասում էր, որ «Գեղարվեստական նյութն իր բնույթով ուղղված է մարդկանց մեջ մտքեր և զգացմունքներ արթնացնելուն »:Կերպարների դերը ևս կարևոր է նյութի իմաստ հասկանալու

համար:Առանց դրա երեխաները չեն կարողանում հասկանալ, թե ինչպես է պետք առանձնացնել գլխավոր միտքը:Հոգեբաններ պարզել են, որ սկզբում այն հարկավոր է երեխային ՝ միտքը առանձնացնելու և հակիրճ ձևակերպելու համար, իսկ հետո ՝ այն օգտագործել մտքի հստակեցման, նկարագրման, ձևակերպվող մտքի խորացման համար:

**1□3□Գրական ստեղծագործության բաղադրամասերը և դրանց ուսումնասիրումը կրտսեր դպրոցում**

Գեղարվեստական գրականության ընդհանուր գծերի և առանձնահատկությունների հետ ծանոթանալուց հետո պետք է, ամենից առաջ, առանձնացնել գրական ստեղծագործության **Բովանդակությունն** ու **ձևը:**

**Բովանդակությունը** երևույթի էությունն է, հիմնական որակը, որոնք պայմանավորում են նրա բոլոր առանձնահատկությունները: **Ձևը** բովանդակության բոլոր տարրերի ներքին և արտաքին կառուցվածքն է, նրա դրսևորման և գոյության եղանակը: Ինչպես որ չի կարող լինել որևէ առարկա՝ առանց իր էության, ներքին որակական հիմքի, այսինքն ՝ բովանդակության, այնպես էլ այդ բոլոր չի կարող արտահայտել այլ կերպ,քան որոշակի ձևի միջոցով:Չկա բովանդակություն ՝ առանց ձևի, ինչպես և չկա բացարձակորեն անբովանդակ ձև:Բովանդակությունը միշտ ձևավորում է, ձևը միշտ ինչ-որ բովանդակություն է արտահայտում:Կրտսեր դպրոցի մայրենի լեզվի ծրագրում հստակորեն տրվածեն գրականագիտական տեղեկությունների այն սահմանը,որը պիտի տիրապետեն աշակերտները:Այդ սահմանում նշված է նաև թեմա եզրույթը:Սովորողները պիտի կարողնան որոշել իրենց կարդացած ստեղծագործությունների թեման. սեր, բնություն հայրենասիրություն, բարեկամություն, մայրական սեր :Թեմաները տարբեր չափաբաժիներով, տարբեր մակարդակներով մշտապես արծարծվել են նաև I-IV դասարանների

մայրենի դասագրքերում, և այդ բնական է: Դրանք չափազանց հոգեհարազատ են կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին: Ստեղծագործության գաղափարը: Բովանդակություն հասկացությունը ստեղծագործության թեմայով չի սպառվում: Մենք գիտենք, որ գրողը երբեք չի կարող անտարբեր լինել իր պատկերած կյանքի նկատմաբ: Նա անպայման որոշ գաղափարական վերաբերմունք ունի, հաստատում կամ ժխտում է իրականության տվյալ կողմ,ցույց է տալիս հեղաինակի վերաբերմունքը, որն , ինչ խոսք, պայմանվորված է ոչ միայն նրա աշխարհահայացքով, այլև ժամանակի հասրակական հանգամանքներով: Ստեղծագործության գաղափարը հենց այն դեպքում է տպավորիչ և ազդեցիկ, երբ մարմնավորում է գործողությունների և բանվորությունների մեջ:

Ստեղծագործության մեջ պետք է տարբերել, նախ, գլխավոր գաղափարը: Սակայն պիտի նկատի ունենալ, որ կրտսեր դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների գլխավոր միտքը՝ գաղափարն առավել պարզ է, ավելին, այդ ստեղծագործությունների մեջ ավելի շուտ առկա է լինում մեկական գաղափար. կրտսեր դպրոցականները դժվարությամբ կարող են ընկալել ստեղծագործության մեջ առկա բազմաթիվ գաղափարները:

Մեթոդիկայում ընդգծվում է գաղափարի ընկալաման կարևորությունը Ջ.Գյուլամիրյանը գտնում է, որ ընթերցած ստեղծագործության գաղափարը երեխաներին ընկալելի դարձնելու համար անհրաժեշտ է դեռևս նախապատրաստական զրույցը նվիրել քննարկվող գաղափարին՝ այն ներկայացնելով թեմայի մեջ:

# ԳԼՈՒԽ 2. ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԵՐ ԿԱՐԴԱՑԱԾԸ ՀԱՄԿԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

## 2.1. Գրական- տեսական գիտելիքների ուսումնասիրման եղանակները

Գրական գիտելիքների ուսումնասիրումն ընթանում է երկու հիմնական ուղիով:

Առաջին՝ փաստերի դիտում, իմաստավորում, կանոնների արտածում կամ հասկացությունների ձևակերպում, տնային աշխատանքի կատարում, ստուգում ու ամփոփում:

Երկրորդ՝ կանոնների, հասկացությունների բացատրում ու ձևակերպում, դրանց վերաբերյալ օրինակների մեջբերում, տնային աշխատանքի կատարում, ստուգում ու ամփոփում:

Գրական գիտելիքներն ուսումնասիրվում են ծրագրով նախատեսված նոր նյութերի հիման վրա:

Հեքիաթներում հանդես են գալիս մարդիկ, կենդանիներ անիրական էակներ, պատմվում է իրական և երևակայական պատահարների մասին բայց նկատի են առնվում ու պատկերվում մարդկային կյանքի զանազան կողմերը, մարդկանց ազնիվ և անազնիվ արարքները , լավ ու վատ գործերը և, որպես կանուն, նրանք ավարտվում են բարի հերոսների հաղթությամբ ու չարի պարտությամբ: Ինքնին հասկանալի է, որ աշակերտները հեքիաթներն այնքնա էլ հեշտությամբ չեն յուրացնի, եթե նախապես չբացատրվեն դրանց բնորոշ առանձնահատկությունները:Ուստի, ուսուցիչը նախ գաղափար է տալիս հեքիաթի մասին, ապա անցնում է ուսուցման նյութ հանդիսացող հեքիաթի ընթերցմանն ու վերապատմմանը:

Հենելուկը ժողովրդկան բանահյուսության վիպական սեռին պատկանող հին ժանրատեսակներից է: Այն առնչվում է մանկավարժությանը դառնում երեխաների մտավոր ունակությունները տրամաբանական մտածողությունը, հատկապես պատմությունը փորձելու և զարգացնելու լավագույն միջոց:

Հանելուկները կյանքում ունեցել են գործնական կիրառություն: Դրանք այսօր էլ հանդես են գալիս որպես մտավոր ունակությունները զարգացնող,բանականությունը մարզող մտախաղեր:Գործնական կիրառության բերումով էլ հանելուկն ընդունում է դրսևորման զանզան ձևեր:Հանելուկի

ամենապարզ ու նախնական ձևը հարցն է ,որն անպայման ենթադրում է որոշակի պատասխան:

Որոշ հանելուկներ ուսուցիչն է ընթերցում ու պարզաբանում, որոշ հանելուկներ էլ կարդում են ու բացատրում աշակերտները:Այնուհետև ուսուցիչը, առանձնացնելով մի քանի հանելուկներ, դրանց շուրջ կազմակերպում է զրույց:

Երկու սիրուն աչիկ ունի,
Մկրատաձև պոչիկ ունի,
Կուրծքը սպիտակ կաթի նման,
Թևերը սև սաթի նման

(Ծիծեռնակ):

Կա մի հսակ կենդանի
Ե՛վ խելացի, և՛ բարի,
Յոթը տարին մեկ անգամ
Ձագ է տալիս աշխարհին :

(Փիղ):

Ի՞նչն է զարդարվում
Տարվա մեջ մի օր,
Թեև աշխարհում
Զարդ է փառավոր

(Եղևնի):

Այն ի՛նչն է, ի՞նչը,
Գիշերն է թռչում
Եվ ճանճով սնվում:

(Չղջիկը) :

Զրույցի ընթացքում ուսուցիչն աշակերտներին բացատրում է, որ հանելուիկներում թեև անմիջականորեն տրված չեն ծիծեռնակի,փղի,եղևնու ու չղջիկի անունները,բայց նշված են նրանց այն հատկանիշները, որոնցից իմացվում

է, որ խոսքը վերաբերում է այդ կենդանիներին: Հենց այդտեղից էլ նա կատարում է մտահանգում և տալիս հանելուկի պարզ հասկացությունը:

Հանելուկները երեխաների ամենասիրած ստեղծագործություններից են: Դրանք հարուստ են հակադրություններով և համեմատություններով, մասնավորեցումներով և ընդհանրացումներով: Նրանց պատասխանների գուշակումը երեխայից պահանջում է վերացարկման ունակություն ,որի զարգացումը նպաստում է հետագա ողջ ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Մի առարկայի կամ երևույթի համեմատումը մյուսի հետ աշակերտներին օգնում է տեսնել ծանոթ առարկաների կամ երևույթների նոր կողմերը, պատկերացնել անծանոթ, անհայտ առարկաներն ու երևույթները ուսուցչի բացատրությունները դրանք դարձնում են մատչելի և մտապահվող:Իրենց շրջապատող առարկաների և երևույթների մասին աշակերտների ունեցած նախնական տեղեկություններն, անշուշտ,սուբյեկտիվ են. հանելուկի գուշակման և մասնավորապես հորինման գործնրացում աշակերտները կատարում են որոնողական ճանապարհով իրենց գիտելիքները հարստացնելու, իրենց շրջապատող աշխարհն ամբողջությամբ և բյեկտիվորեն տեսնելու ուղղությամբ պարզ փորձեր. ծանոթանում են իրենց շրջապատող իրերի և երևույթների էական հատկանիշներին, սովորում են դրանք զանազանել միմյանցից ՝ ուսուցման գործընթացում պասիվ ընկալողի դերը փոխելով ակտիվ մասնակցի դերով ՝ կատարելով վերլուծական աշխատանք:

Կրտսեր դպրոցականները, որպես կանոն, խուսափում են նկարագրութ-յուններից:

Սակայն նկարագրական դրվագներն աստիճանաբար հանելուկների միջոցով պետք է ավելի ու ավելի մեծ տեղ գրավեն դպրոցականների խոսքային գործունեության մեջ, որովհետև դրանք հարստացնում են խոսքը, այն դարձնում առավել հասկանալի, տպավորիչ մանրամասն, ձևավորում են այնպիսի կարևոր հատկանիշներ,ինչպիսիք են նրբանկատությունը, ամեն ինչի մեջ գեղեցիկն ու արժանին տեսնելու և գնահատելու կարողությունները, ընդհանուրի մեջ մասնավորը և էականը տարբերելու ունակություն և այլն: Հանելուկների հյուսումը առարկա և երևույթը գեղարվեստորեն նկարագրելու կարողության

մշակման հետաքրքրաշարժ աշխատանքի ձև է: Հատկապես կրտսեր դպրոցականները չափազանց տպավորվող,զգայուն էակները են և նրանց հետ աշխատելիս, պետք է կարևորել հետաքրքրականություն, ոգևորություն, մրցակցություն, բուռն հույզեր-զգացումներ առաջացող պահերը: Այս առումով՝ ուսուցման համակարգում ուշադրություն պետք է հատկացնել խաղերի օգտագործմանը:Ուսուցման արդյունավետությանը նպաստող խաղեր կարելի է կազմակերպել նաև հանելուկների ստեղծման ճանապարհով :

Հանելուկների առաջադրում ինքնին աշխուժացնում է, թարմացնում երեխաներին,օժանդակում նրանց տրամաբանական և պատկերավոր մտածողության, երևակայության,կռահելու ունակությունների զարգացմանը:

Առակի ժանրը հայ գրականության մեջ ունի բազմադարյան պատմություն:Մեզ են հասել դեռևս 12-13-րդ դարերում առակագիրներ Մխիթար Գոշի , Վարդան Այգեկցու գրած առակները, որոնք թարգմանվել են շատ լեզուներով:Այդ առակները շարադրվել են արձակ : Հետագայում ավելի շատ գրվել են չափածո առակներ:

Առակը նման է պատմվածքի. ունի բովանդակություն,հերոսներ,տեղի են ունենում դեպքեր, առկա է գաղափարը,ենթատեքստը, կան նկարագրություններ:Այն նման է նաև հեքիաթին.կան կենդանիներ, որոնք խոսում են, գործում դատողություններ անում:Հենց այս այլաբանության կամ փոխաբերության բացահայտումն էլ նրա ավանդման հիմնական առանձնահատկությունն է:Առակների հերոսներն ունեն բնավորության խտացված գծեր,նրանց արարքները մատչելի են երեխաների, որովհետև վերցված են կյանքից:Նրանցում պատմվում է կա՛մ մարդկանց, կա՛մ կենդանիների կյանքից վերցրած մեկ դրվագ, որը գնահատվում է կա՛մ առակի հեղինակի, կա՛մ նրա հերոսի անունից:

Առակում նկարագրված դեպքերի խորքում ենթադրվում է խորը իմաստ՝ մարդկանց տարբեր թերությունների, արարքների քննադատումը:

Ինչպես ներկայացված է Ջուլիետա Գյուլամիրյանի «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա» դասագրքում, առակներն ուսուցանվում են գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրման մեթոդական շղթայով, սակայն կան որոշ առանձնահատկություններ.

1. Հենց սկզբում կարիք չկա երեխաներին ներկայացնել կամ նրանց միջոցով բացահայտել,թե առակի մեջ որն է իրականը, որը ՝ երևակայականը:
2. Կարևորել այլաբանությունների և փոխաբերությունների իմաստների բացահայտումը:
3. Չհամեմատել առակի հերոսներին երեխաներին ծանոթ մարդկանց:
4. Հարցերի և պարզաբանումների միջոցով օգնել, որ երեխաները հասկանան ոչ միայն այն, ինչ հեղինակը բառերով է արտահայտել, այլև այն, ինչ թաքնված է տողերի տակ:
5. Առակը դերերով կարդալիս դերի ընտրությունը թողնել երեխաներին. Չպարտադրել որևէ դեր միայն նրա համար, որ առակի հերոսին դասարանի երեխաներից մեկը շատ նման է:
6. Առակը շահեկան է ոչ միայն դերերով կարդալ,այլև բեմականացնել:
7. Հաշվի առնելով առակի լեզվի և ոճի բարդությունը,գաղափարի ոչ բացահայտ դրսևորումը ՝ առակի ընթերցումը կարելի է կազմակերպել ՝ այն տրամաբանական մասերի բաժանելով և հատվածաբար քննարկելով յուրաքանչյուր միտք:
8. Առակը կարիք չկա պատմել,քանի որ նրա լեզուն և ոճն անկրկնելի են. Երեխաները չեն կարող պատմելիս պահպանել դրանք անգամ մասամբ:

Ասենք, դասանյութը Ա.Խնկոյանի ‹‹Գայլն ուզառը›› առակն է: Ուսուցիչը նախ բացատրում է, որ առակներում հանդես են բերվում ոչ միայն մարդիկ, այլև անշունչ առարկաներ, բույսեր և կենդանիներ, բայց խոսվում է մարդկային արարքների մասին, և որ դրանց վերջում , երբեմն էլ սկզբում տրվում է բարոյական խրատներ: Այնուհետև նշվում է որ առակ է նաև Ա.Խնկոյանի ‹‹Գայլն ու գառը›› և մատնացույց անում ու բացատրում այն տեղերը, որ շատ դիպուկ են առակի համար:Նա առակը կարդալ ու բացատրել է տալիս նաև աշակերտներին: ‹‹Գայլն ու գառը›› նրանք տանը սովորում են լավ կարդալ, իսկ դասարանում այն ընթերցում են թե՛ անհատական կերպով և թե՛ դերերով, որից հետո ուսուցիչը կազմակերպում է զրույց այսպիսի հարցերի շուրջ:

<u>Ո՞վ է գրել ‹‹Գայլն ու գառը››, ի՞նչ խոսքերով և ինչպե՞ս է սկսվում այդ գրվածքը, ի՞նչ դերում է հանդես գալիս գայլը,ի՞նչ դերում՝ գառը, ինչպե՞ս է վարվում գայլը</u>

գառան հետ, ինչպիսի՞ արարքի մասին է խոսվում առակում, ի՞նչ միտք է արտահայտված նրա եզրափակիչ մասում:Զրույցի վերջում ուսուցիչը, կատարելով ամփոփում, տալիս է առակի ընմբռնումը:

Նշված օրինակում գրական գիտելիքներն աշակերտները ձեռք են բերում գլխավորապես հաղորդման, բացատրման, հարցադրամն, զրուցատրման, ընթերցման միջոցով:

Այդ գիտելիքների ձեռքբերման համար գործադրվում են նաև ուրիշ մեթոդական հմարներ՝ **բաղդատում, հանդիպադրում, զուգադրում,** զննական պարագաների օգտագործում, վարժությունների կատարում և այլն:

Դիտումը նույնպես կարևոր նշանակություն ունի գրական-տեսական գիտելիքների,հատկապես գեղարվեստական խոսքի պատկերավորման ու արտահայտչական միջոցների ուսուցման համար:Դիտարկումը որպես մեթոդական եղանակ , ունի առանձնահատկությունը, որ նախ գրական երկերից ընտրվում և իմաստավորվում են դիպուկ, բնորոշ փաստերն ու օրինակները, ապա դրանց հիման վրա բացատրվում են գրական-տեսական հասկացությունները;

«Դիտման միջոցով գրական-տեսական գիտելիքները ոչ միայն ամրակալվում են, այլև խորացվում:Այսպես, օրինակ, աշակերտներին բացատրվում է, որ այն բառերն ու արտահայտությունները, որոնցով մի արարածի կամ առարկայի վերագրվում են մի այլ արարածի կամ առարկայի հատկությունները՝ խոսքը պատկերավոր դարձնելու համար, կոչվում են փոխաբերություն»[9,էջ 161]:

Գրական-տեսական գիտելիքների ուսուցման համար կարևոր նշանակություն ունի հին և նոր նյութերի միջև կապի ստեղծումը:Դա կատարվում է զանազան եղանակներով, մանավանդ զրույցի միջոցով:

Զրույցի մինչև նյութի հաղորդումը վերհիշվում ու թարմացվում են նրա հետ սերտորեն կապվող հին նյութի համապատասխան պահերը: Այսպիսի զրույցը արգասավոր և գեղարվեստական երկերից ընտրված քաղվածքներ:

Գրական-տեսական գիտելիքների ուսուցման ընթացքում կատարվում են զանազան լեզվառճական վարժություններ, որոնց նպատակը գրական-տեսական գիտելիքների հաստատուն մտապահումն ու գործնական կիրառումն է աշակերտների կողմից, ինչպես նաև նրանց բառապաշարի հարստացումը

գեղեցիկ բառաձևերով, թևավոր խոսքերով, պատկերավոր արտահայտություն-ներով և այլն:Դրա համապատասխան ՝ լեզվառճական վարժությունները լինում են մարզողական և կիառական:

Մարզողական վարժությունները կատարվում են ամենից առաջ գրական նոր նյութի ուսումնասիրման ավարտից հետո և միջոց դառնում նրա մտապահման և ամրակայման համար: Օրինակ՝ եթե գաղափար է տրվում համեմատության մասին , աշակերտներին հանձնարարվում է գտնել ու ընդգծել նոր նյութի բնագրում եղած համեմատությունները, դրանք արտագրել տետրերում, լավագույնները սովորել անգիր, բերել ինքնուրույն օրինակներ:Այնուհետև նրանց կարելի է առաջարկել մի անյպիսի ծանոթ բնագիր, ուր բաց են թողնված համեմատությունները և պահնջել դրանք լրացնել համատասխան օրինակներով:

Կիրառական բնույթի վարժությունները կատարվում են գրական-տեսական գիտելիքների ավանդումից ու ամրակացումից հետո միջոց դառնում դրանց գործադրման համար:Աշակերտներն այսպիսի վարժության կատարման ժամանակ իրենց սովորած գրական-տեսական գիտելիքները գործնականորեն կիրառում են մի կողմից , նոր գրական երկեր ուսումնասիրելիս, մյուս կողմից, ինքնուրույն խոսք կառուցելիս: Առաջին դեպքում նրան ձեռք են բերում գեղարվեստական խոսքի նմուշները ճիշտ հասկանալու և բացատրելու, երկրորդ դեպքում ՝ սեփական խոսքի նմուշները ճիշտ հասկանալու և բացատրելու, երկրորդ դեպքում՝ սեփական խոսքը գեղեցիկ կառուցելու հմտություններ: Գրական-տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների մշակման ու զարգացման հիմա վրա աշակերտներին կարելի է հանձնարարել հյուսել (հորինել) առածներ, ասացվածքներ, հանելուկներ, հեքիաթներ,առակներ, փոքրիկ պատմվածքներ, ոտանավորներ:Դա մեծապես կնպաստի աշակերտների ոչ միայն գրական-գեղարվեստական հակումների դրսևորմանը, այլև նրանց դիտողական, մտածողական կարողությունների զարգացմանը, և մտահորիզոնի ընդլայնմանը:

Գրական-տեսական գիտելիքների ձեռքբերումը շատ դեպքերում անհնարին է առանց քերականական համապատասխան կանոնների օգտագործման: Օրինակ՝ ուսուցման ընթացքում, երբ չեն օգտագործվում բառերի կապակցության, նախադասության երանգների, կոչականների վերաբերյալ

գիտելիքները, աշակերտները լավ չեն հասկանում բացականչումը, հարցադրումը, բառերի բացողումը և այլն:Իսկ առանց գեղարվեստական խոսքի խոր ընբռման նրանք չեն կարող զգալ դրական երկերի հուզականության ու արտահայտչականության ուժը:Հետևաբար, գրական-տեսական գիտելիքների ուսուցման ընթացքում քերականական որոշ կանոնների օգտագործումը խիստ անհրաժեշտ է, միայն թե դա պետք է անել առանց չափազանցության և ծայրահեղության:

## 2.2 Գրական ստեղծագործության վերլուծությունը ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձեվավորման միջոց

Հայտնի է, որ գեղարվեստական գրականության ընթերցումը մեծապես նպաստում է նրանում արտահայտված հույզերի ու մտքերի ըմբռնմանը, աշակերտների մեջ առաջացնում է ազնիվ ձգտումներ ու զգացումներ, դրսևորում ու նպատակաուղղում գեղեցիկի նկատմամբ նրանց ունեցած հակումներն ու ձիրքերը:Գեղարվեստական գրականության ընթերցումը աշակերտների մեջ ամրակայում ու զարգացնում է նաև գեղեցիկ, գեղարվեստորեն կարդալու հմտություն, հարստացնում նրանց բառապաշարը գրական բառաձևերով, պատկերավոր դարձվածքներով ու արտահայտություններով:Դրա հետ միաժամանակ՝ նա հղկում, մշակում և ավելի արտահայտիչ ու իմաստալից է դարձնում սովորողների խոսքը:

«Մի ազգ երբեք չի կարող կրթության կատարելագործությանը, հասնել , քանի նրա մեջ զարգացած չէ ընթերցանության սերը», - գրել է Ռաֆֆին:

Գեղարվեստական գրականությունն ուղեկցում է մարդուն վաղ մանկան տարիքից:

Ընթերցանությունը աշակերտների մեջ ձևավորում է ազնիվ ձգտումներ ու հույզեր,գնահատել է տալիս գեղեցիկը, բարին, վեհը, ներկայացնում է մարդկային

զգացմունքնեի և փոխհարաբերությունների աշխարհը, ցույց է տալիս կյանքում ճշմարտությունը փնտրելու ուղիները:

Գրականության ուսուցման գործընթացին աշակերտներին նախապատրաստելու աշխատանքների հիմքում ժամանակակից մեթոդիստները դնում են գրագետ ընթերցողի ձևավորումը, ահսինքն՝ այն ընթերցողի, որը տիրապետում է լավ կարդալու բոլոր ունակություններին: Ա. Պոլզովան, [14, էջ 10] այդ ընթերցողին անվանում է տաղանդավոր ընթերցող՝ նրան տալով այնպիսի հատկանիշներ,որոնք կապված են միմյանց հետ: Դրանք են՝ գեղագիտական հաճույք ընթերցանությունից, գրքի ընկալումը՝ որպես գրողի ստեղծագործական տքնաջան աշխատանքի արդյունք և գիտելիքների անփոխարինելի աղբյուր: Միաժամանակ չի կարելի մոռանալ, որ որակյա; ընթերցողների կոլեկտիվում՝ մեծերի մասնակցությամբ: Ավագների ընթերցումը փոքրի ներկայությամբ, ստեղծագործությունից ստացված հուզմունքի փոխադարձ ընկալումը, կարդացածի քննարկումը արժեքավոր հիմք են փոքրիկ ընթերցողի՝ գրականություն ընթերցելու համար անհրաժեշտ ունակությունների ձևավորման և զարգացման գործընթացում:

Հանրահայտ է, որ ընթերցանությունը ուսուցման հիմքն է: Կարդալու կարողության մակարդակով են նաև պայմանավորված աշակերտի հաջողություններն ու սովորելու ցանկությունը: Կտրուկ փոխվել է հասարակական կյանքի այնպես, որ հեռուստատեսության, համակարգիչների երևան գալով՝ գրքերը մղվել են երկրորդական պլան:Այսօր դժվարությունն այն է, որ երեխաները քիչ և ոչ հաճույքով են կարդում:Այս ամենը կարելի է բացատրել հետևյալ կերպ. ընթերցանության գործընթացը պահանջում է լարված աշխատանք:Իսկ ինչու՞ լարվել, եթե այսօր հասանելի են տեղեկատվության այլ աղբյուրներ՝ ոչ պակաս հետաքրքիր քան գեղարվեստական գրականությունը:Օրինակ՝ կինո, հեռուստատեսություն , համացանց:Չնայած դրան՝ գիրքը ստեղծելու գործընթացն իր տեղում չի մնում: Գրախանութներն առաջարկում են բազմաթիվ նկարազարդ գրքեր,հանրագիտարաններ, մեթոդական ձեռնարկներ, որոնք նպաստում են երեխաների մտածողության զարգացմանն ու աշխարհայացքի ընդլայնման:

«Պետք է պահպանել և զարգացնել համատեղ ընթերցանության պրակտիկաան. սա է այն խնդիրներից մեկը, որը դրված է ընթերցանության ուսուցման ժամանակակից մեթոդիկայի առջև»[14,էջ 17]:

Ընթերցողական հետաքրքրության ձևավորման աշխատանքն իրականացվում է մայրենիի դասերի, արտադասարանական ընթերցանության ժամերի, գրադարանի հետ համագործակցելով, ընտանեկան ընթերցանության ակումբների, գրական տոնահանդեսների կազմակերպման միջոցով: Ակտիվ ընթերցողի դաստիրակության գործում մեծ դեր ունի դպրոցական գրադարանը:

Արտադասարանական ընթերցանության դասերը լայն հնարավորություններ են տալիս երեխաների ստեղծագործական, ճանաչողական որակների զարգացման համա:

Երեխաների ընթերցողական հետաքրքրության զարգացման հաջողությունը պայմանավորված է նաև այդ խնդրի լուծոշման գործընթացում ծնողների մասնակցությամբ:Երեխաները կարիք ունեն «ընթերցող» միջավայրի, գրական շրջապատի:

Միայն այս դեպքում է առաջանում կարդալու ցանկությունը, որը հետագայում դառնում է խորը հոգևոր պահանջմունք:«Կարդացող» միջավայրը պետք է ստեղծվի նախ և առաջ ընտանիքում, և ուսուցիչը կարող է իր ներդրումն ունենալ այդ միջավայրը ստեղծելու գործում:

Մեր կարծիքով՝ շաբաթը մեկ անգամ կարելի է կազմակերպել այնպիսի մի դաս, որի ընթացքում աշակերտներից մեկը լինի ուսուցիչ դերում և դասի թեման լինի գեղարվեստական գրականությունից կարդացած որևէ ստեղծագործություն: Կարևորում ենք նշել, որ այդ դասին նախապատրաստվելիս ոչ միայն ծնողներն օգնեն երեխաներին, այլև մասնակցեն այդ դասերին. Մասնակցեն՝ ոչ թե միայն դասարանի վերջում նստելով, այլև դասի կազմակերպան մասնակիցը դառնան, դառնան իրենց երեխայի և նրա դասընկերների գործընկերները:Սրանով ընթերցողական մթնոլորտը կտեղափոխվի նաև ընտանեկան միջավայր:Ծնողի հետ միասին երեխան ընտրում է գրականությունը, միասին կարդում և վերլուծում են, մտածում, թե ինչպես այն դասարանին ներկայացնեն:

Այս աշխատանքը նպաստում է գրքի նկատմամբ հետաքրքրության սերմանմանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, խոսքի նկատմամբ հարգանքի ձևավորմանը, ծնողների և երեխաների միաբանմանը:

Մեթոդիստ Լ. Ն. Ռոժինան գրում է, որ գեղարվեստական ստեղծագործության լիարժեք ընկալում չի սահմանափակվում միայն կարդացածը հասկանալով:Այն իրենից ներկայացնում է բարդ գործընթաց, որն իր մեջ պարտադիր ներառում է որոշակի վերաբերմունքի առաջ գալը՝ ինչպես ստեղծագործության, անպես էլ այն իրեղության նկատմամբ, որն արտացոլված է այդ ստեղծագործության մեջ [12, էջ 28]:

Ներկայացնենք ‹‹մտախոհ ընթերցանության ›› կանոնը, որը ձևավորված է ‹‹երեք π »

Բանաձևով՝

Երեք → վերապրի՛ր
→ պատկերացրու՛
Π → հասկացի՛ր
→ զգացմունքները
Ընթերցածը → կերպարները
→ մտքերը

Գոհունակությամբ կարող ենք նշել, որ այժմ այդ խնդիրները որոշակիորեն վերականգնվում են: Այդ է վկայում կրտսեր դպրոցում սովորողների համար ստեղծված ժամանակակից քրիստոմատիան՝ **«Գիրք ընտանեկան ընթերցանության համար»:** Այս գրքում հեղինակները դիմում են երեխաներին.«Փոքրի՛կ ընթերցող, առաջարկի՛ր ընտանիքիդ անդամներից յուրաքանչյուրին նստել սեղանի շուրջ, միասին կարդալ և լսել այն ստեղծագործությունների ընթերցանությունը, որոնք ներառված են այս քրիստոմատիայի մեջ»[14, էջ 38] : Ինչպես նախկին, այնպես էլ մի քանի գործող դասագրքերում կան որոշակի առաջադրանքներ, որոնցում խորհուրդ են տալիս երեխաներին մեծերի հետ միասին քննարկել կարդացածը, օգտվել ընտանեկան գրադարանից:Օրինակ, եթե պետք է երեխային բացատրել, որ նա վատ խոսքեր է ասել որևէ մեկին, և պետք է ներողություն խնդրի, լավ կլինի ոչ միայն երեխային

բացատրել նրա արարքի անթույլատրելիությունը, այլև նրա համար կարդալ մի այնպիսի հեքիաթ, որը կունենա դաստիարակչական ազդեցություն ունեցող հոգևոր-բարոյական բովանդակություն:Ընթերցանությունը սովորողների վրա կթողնի մեծ տպավորություն, եթե ընթերցանությունից հետո նրանց հետ տարվի ոչ միայն բացատրական, այլև հեքիաթը խաղի միջոցով վերակենդանացնելու ուղղությամբ աշխատանք:Դերերը երեխան կարող է բաշխել սեփական ցանկությամբ՝ ներառելով ընտանիքի բոլոր անդամներին՝ մեծերին և փոքրերին:Սա հնարավորություն կտա,որ նա իրեն զգա հերոսի դերում, վերապրի ուրախությունը, մեղքի, կորստի զգացումները երեխան ձեռք կբերի փորձ և կսովորի լինել բարի և արդարամիտ:

Ուսուցիչ գլխավոր խնդիրն այն, է, որ.

ա) առաջին հերթին մայրենիի դասերը կազմակերպելիս իրականացնի այնպիսի մեթոդական համակարգ, որի միջոցով ձևավորվի սովորողների՝ կարդալու արժևորման համոզմունքը, զարգանան ընթերցողական կարողություններ,

բ) ծնողների հետ տանի համագործակցային աշխատանք՝

- Հասնի նրան, որ ընթերցելու սովորությունը դառնա ընտանեկան ռեժիմի բաղկացուցիչը,
- Ստեղծվի ընտանեկան և դասարանական գրադարան,
- ծնողների մեջ ձևավորվի իրենց երեխաներին մանկական գրադարանի ընթերցող դարձնելու համոզմունք:

Երեխաների համար գրքերի ընտրության չափանիշները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ **գեղարվեստականության չափանիշներ,** որոնք հնարավորություն են տալիս գնահատել գրքի արժանիքները և ընդգրկել մանկական ընթերցանության համար նախատեսված ժանրերի, տիպերի մեջ, և **մանկավարժական չափանիշներ,** որոնք հնարավորություն են տալիս ստեղծել համապատասխանություն կոնկրետք գրական ստեղծագործությունների և երեխաների համար գրքերն ընտրելու որոշակի չափանիշներ.

1. **Գաղափարական ուղղվածություն** – գիրքը կոչված է կոնկրետ օրինակներով ի հայտ բերել բարու, արդարության, ազնվության, քաջության մասին գաղափարները, ձևավորվել ճիշտ վերաբերմունք

մարդկանց և ինքն իր, իրավունքների և պարտականությունների, արարքների , աշխատանքի և այլնի նկատմամբ:

2. **Բարձր գեղարվեստական վարպետություն** - ստեղծագործության մեջ գաղափարներով միշտ հանդես են գալիս հերոսները:Թե ինչպես է երեխան վերաբերվում հերոսին, նրա զգացմունքներն,հույզերին և արարքներին, կախված է նրանից, թե կընդունի՞ նա գրական ստեղծագործության մեջ մեջ եղած գաղափարները:
3. **Համապատասխանություն** - ստեղծագործության բովանդակության համապատսխանությունը երեխաների տարիքային և հոգեբանակն առանձնահատկություններին:

4. **Սյուժեի պարզություն և փոխհարաբերությունների հստակություն** - երեխային հետաքրքրում է գործողություններով հագեցած ստեղծագործությունը, որը հերոսների արարքներն ու զգացմունքները ընբռնելու հնարավորություն է տալիս: Փոքր երեխաներն անխոս հավատում են այն ամենին, ինչ գրված է գրքում, և այդ հավատն էլ գրողին դնում է պատասխանտու խնդիրի առջև: Նա պետք է ճշմարիտ լինի ընթերցողի հետ, այսինքն՝ ստեղծագործությունը պետք է կառուցված լինի հուզմունքներից: Նախքան երեխաների համար գրականություն ընտրելը, պետք է դաաստիրակել, թե ինչպես վարվել գրքի հետ՝ որպես հետաքրքիր տեղեկատվության աղբյուր:

Ինչպես ասվում է ժողովրդական առածում .«Մի հովիվը ջուր խմելու կարող է տանել հարյուր ձի, բայց հարյուր հովիվ չեն կարող ստիպել ջուր խմել մեկ ձիու, եթե նա դա չի ցանկանում »:Երեխային դժվար է ստիպել անել այն, ինչը նա չի ցանկանում, բայց չկա այնպիսի երեխա. Որին չգրավի , եթե նա տեսնի, թե ինչպես է դա անում ուրիշ երեխա կամ հեղինակություն ունեցող մեծահասակը:

Ինչպես նշեցինք վերևում, երեխաների ընթերցողական հետաքրքրության զարգացման հաջողությունը պայմանավորված է «Ընթերցող» միջավայրից:

Կարդալ ամեն բան՝ բոլորովին պետք չէ, հարկավոր է կարդալ միայն այն , ինչը պատասխանում է հոգումդ ծագած հարցերին, -գրել է

Լ.Տոլստոյը:Գաղտնիքը չէ, որ մարդը սիրում է զբաղվել այն գործողությամբ, որը նրան հաջողվում է, որից նա բավականություն է ստանում:

Հեղինակը միշտ մտածելու տեղիք է տալիս ընթերցողին, ունկնդիրին, դիտորդին:Գիրքը ընթերցողի ստեղծագործական մոտեցման կարիքն ունի, իսկ ընթերցողի այդ մոտեցման համար անհրաժեշտ է դրան նպաստող գիրք:Ցանկացած ստեղծագործության ըմբռնման հոգեբանական հիմքը ընթերցողի երևակայությունն է: Երևակայության զարգացումն է դաստիրակում ընթերցողին:

‹‹Ազատ միտք›› ընթերցանություն դասագրքերի հե ղինակների կարծիքով ստեղծագործության վերնագրով կամ նկարներով տեքստի բովանդակության կանխագուշակման կարողության մշակման գործընթացում կարևոր երևակայության զարգացումն է նրա ընթերցումից առաջ, որի միջոցով կարդացողի ուշադրությունը կենտրոնանում է բուն տեքստի վրա: Ընթերցողի երևակայության առանձնահատկությունն արտահայտվում է ոչ միայն ընթերցողի կենսափորձից ունեցած տպավորությունների համակարգմամբ , այլև ընթերցողի կողմից անիրականանալի, գոյություն չունեցող առարակների և երևույթների, ինչպես նաև այնպիսի պատկերների կերտմամբ , որոնք չեն կարող գոյություն ունենալ իրականության մեջ: ‹‹Համաստեղծագործության ›› կոանը բառի հոգևոր զորությունն է:Բառը և բառակապակցությունը կապված են բազմաթիվ բարդ հիշողությունների հետ և կարող են ընթերցողի հոգու խորքում արթնացնել շատ զգացմունքներ, դեպքեր, պատկերներ:

Մենք մեր պրակտիակյի ժամանակ երեխաներին առաջարկեցինք նակրել, թե ինչպես են պատկերացնում ‹‹Օրը կարծես ննջում է›› նախադասության իմաստը:Նկարների տարբերակների թիվը համապատասխանում է փորձարարության մասնակիցների թվին:Ոչ մեկը չեր կրկնում միյուսին:Աշակերտներից մեկը պատկերել էր օրվա երեկոյան պահը, երբ ամեն ինչ խաղաղ է հանդարտ:Մեկ այլ աշակերտ պատկերել էր վաղ առավոտը, երբ օրը դեռ չի բացվե, և ամեն ինչ նիրհում:Ոմանք պատկերել էին անձրևոտ օր, ոմանք՝ մառախլապատ, ոմանք էլ՝ ձանձրալի և այլն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Բաղդասարյան Ա. , Հեքիաթի դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցում //Նախաշավիղ 2009, 1-2
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, -Երևան, «Զանգակ-97 »,2006:
3. Գյուլամիրյան Ջ. Հ., « Մայրենի 2» դասագրքի մեթոդական ուղեցույց, -Երևան , «Լույս», 2004
4. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսյություն, -Երևան,1967:
5. Հայոց լեզու , գրականություն, Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, Երևան, «Անտարես» ,2006
6. Емельянова М. Н., Методические аспекты воспитания у детей интереса к художественной литературе // Начальная Школа, Плюс До и После, 3/09.
7. Зобнина М.А., Читать значит творить // Начальная Школа, 2/05.
8. Музика Л.М., Интерес к чтению:как его пробудить // Начальная Школа,6/07.
9. Родина А.А., Литературное образование маладшиь школьников// Начальная Школа 2/98.
10. Рожденственская Р.Л., Ролц семейного чтения в развитии творческого читателья // Начальная Школа 6/08.
11. Соболева О.В., Беседы о чтении // Начальная Школа Плюс До и После, 9/08.